ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 7 - ՀՊ /03/53.

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«30» 08 2019թ.

ք. Երևան «--------» «----------» 2019 թ.

«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ը, համաձայն իր կանոնադրության և «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքի, որպես հավատարմագրման ազգային մարմին (այսուհետ՝ ՀԱՄ) ի դեմս ՀԱՄ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Անի Օբոսյան, մի կողմից, և «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ն ի դեմս կազմակերպության գլխավոր տնօրեն՝ Մովսես Վարդանյանի, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն պայմանագիրը կարգավորում է ՀԱՄ-ի և հավատարմագրված «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ-ի տրամաչափարկման լաբորատորիայի (այսուհետ՝ ՀԳՄ) (հավատարմագրման վկայագրի գրանցահամար՝ № 002/C-002, գործողության ժամկետ՝ 08.05.2019թ.-08.05.2022թ.) միջև հավատարմագրման գրանցամատյանում գրանցումից հետո առաջացած հարաբերությունները:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. ՀԳՄ-ի իրավունքները և պարտավորությունները.

2.1.1. ՀԳՄ-ն իրավունք ունի՝

1) հավատարմագրման վկայագրի վավերականության ընթացքում դիմել ՀԱՄ-ին՝ հավատարմագրումը ընդլայնելու, կրճատելու, կասեցնելու, վերականգնելու կամ դադարեցնելու վերաբերյալ.

2) օգտագործել ՀԱՄ-ի կողմից տրամադրվող հավատարմագրման նշանը և հավատարմագրված լինելու վերաբերյալ տեքստային վկայակոչումը՝ համաձայն «Հավատարմագրման ազգային մարմնի պատկերանիշի և հավատարմագրման նշանի կիրառման» կարգի.

3) ներկայացնել հիմնավոր առարկություն գնահատման խմբի կազմում ընդգրկված կոնկրետ գնահատողի կամ փորձագետի նշանակման վերաբերյալ.

4) վկայակոչել գովազդային նյութերում իր հավատարմագրված լինելը.

5) հավատարմագրման դադարեցման դեպքում կրկին դիմել հավատարմագրման՝ դադարեցման հիմքերը վերացնելուց հետո.

6) պահանջել պարբերական գնահատման և արտահերթ գնահատման արդյունքները, ինչպես նաև հավատարմագրման ընդլայնման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննության(ների) և ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման արդյունքների հաշվետվությունները.

7) դիմել բողոքարկման հանձնաժողովին, որը գործում է հավատարմագրման համակարգի մեջ, հավատարմագրման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ ՀԱՄ-ի կողմից ընդունված որևէ անբարենպաստ որոշման վերանայման պահանջով:

2.1.2. ՀԳՄ-ն պարտավոր է՝

1) համապատասխանել հավատարմագրման չափանիշներին և պատշաճ կերպով պահպանել հավատարմագրման կանոնները, ընթացակարգերը և մշտապես

համապատասխանել այն ստանդարտների, նորմատիվ փաստաթղթերի և իրավական ակտերի պահանջներին, որոնց համաձայն հավատարմագրվել է.

2) 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրել տեղեկատվություն զգալի փոփոխությունների մասին, որոնք վերաբերում են իր հավատարմագրմանը, կարգավիճակին կամ գործունեությանը՝ կապված հետևյալի հետ. իրավաբանական, գործարար (կոմերցիոն), գույքային կամ կազմակերպական կարգավիճակի, ղեկավարության, հիմնական անձնակազմի, քաղաքականության, ռեսուրսների և սենքերի, հավատարմագրման ոլորտի և հավատարմագրման պահանջների կատարման ունակության վրա ազդեցության հնարավորություն ունեցող այլ գործոնների փոփոխության վերաբերյալ.

3) ստեղծել պայմաններ հավատարմագրման վկայագրի վավերականության ամբողջ ընթացքում պարբերական գնահատում և արտահերթ գնահատում իրականացնելու համար.

4) ՀԱՄ-ին ապահովել գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվությունից, փաստաթղթերից և հաշվետվություններից օգտվելու հասանելիությունը.

5) ապահովել գնահատման խմբի մուտքը ՀԳՄ-ի տարածք սարքավորումներից, համապատասխան տեղեկատվությունից օգտվելու համար և ցուցաբերել այլ անհրաժեշտ աջակցություն, ըստ գործունեության իրականացման վայրի գնահատումն իրականացնելու ժամանակ.

6) պահպանել պարբերական գնահատման, այդ թվում՝ արտահերթ գնահատման ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում ՀԱՄ-ի կողմից սահմանված ուղղիչ գործողությունների իրականացման ստույգ ժամկետները.

7) օգտագործել հավատարմագրված լինելու վերաբերյալ տեքստային վկայակոչումը կամ հավատարմագրման նշանը միայն հավատարմագրված ոլորտի շրջանակներում.

8) օգտագործել հավատարմագրված լինելու վերաբերյալ տեքստային վկայակոչումը կամ հավատարմագրման նշանը այնպես, որ թյուրիմացության մեջ չգցի, չհեղինակազրկի կամ վնաս չհասցնի ՀԱՄ-ի վարկանիշին՝ համաձայն «Հավատարմագրման ազգային մարմնի պատկերանիշի և հավատարմագրման նշանի կիրառման» կարգի.

9) հավատարմագրման վկայագրի գրանցման ամսաթվից հետո 40 բանկային օրվա ընթացքում յուրաքանչյուր տարի (հավատարմագրման վկայագրի վավերականության ժամկետ) վճարել տարեկան անդամավճար, որի համար ՀԱՄ-ի կողմից կտրվի հաշիվ-ապրանքագիր.

10) կատարել վճարումներ ՀԱՄ-ի կողմից սահմանված ժամկետում մատուցված հավատարմագրման ծառայությունների, հավատարմագրման պայմանների փոփոխության առկայության դեպքերում՝ արտահերթ գնահատումների համար, անկախ հավատարմագրման արդյունքներից.

11) հավատարմագրման դադարեցման դեպքում ՀԱՄ-ին վերադարձնել հավատարմագրման վկայագրի բնօրինակը իր հավելվածներով 10 աշխատանքային օրվա ընթացքում՝ անկախ բողոքարկման հավանականությունից.

12) համագործակցել ՀԱՄ-ի հետ՝ հավատարմագրված համապատասխանության գնահատման գործունեության վերաբերյալ բողոքներն ուսումնասիրելու նպատակով.

13) հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում չիրականացնել համապատասխանության գնահատման գործունեություն՝ վկայակոչելով իր հավատարմագրված լինելը, չօգտվել հավատարմագրման նշանից, ինչպես նաև չներկայացնել հավատարմագրման ընդլայնման հայտ.

14) կիրառելիության դեպքում, մասնակցել միջլաբորատոր համեմատություններին և (կամ) որակավորման ստուգման ծրագրերին և դրանց վերաբերյալ ՀԱՄ-ին տրամադրել համապատասխան տեղեկատվություն.

15) ՀԱՄ-ին տրամադրել տեղեկատվություն համապատասխանության գնահատման աշխատանքների վերաբերյալ՝ ըստ սահմանված ձևաչափի:

2.2. ՀԱՄ-ի իրավունքները և պարտավորությունները.

2.2.1. ՀԱՄ-ը իրավունք ունի՝

1) ՀԳՄ-ի հավատարմագրման ընդլայնման գործընթացը համատեղել պարբերական գնահատման հետ.

2) տեղեկացնելով ՀԳՄ-ին՝ իրականացնել արտահերթ գնահատումներ ֆիզիկական կամ իրավաբանական անձանցից և ստուգումներ իրականացնելու իրավասություն ունեցող մարմիններից ստացված գանգատների (բողոքների), ահազանգերի և ՀԳՄ-ի հավատարմագրման պայմանների փոփոխությունների առկայության դեպքերում՝ ինչպիսիք են՝ Պայմանագրի 2.1.2. կետի 2) ենթակետում նշված գործոնները.

3) ՀԳՄ-ի կասեցման հիմքերի վերացման ապացույցները ստանալուց հետո կատարել ՀԳՄ-ի լրացուցիչ գնահատում և ըստ անհրաժեշտության իրականացնել ՀԳՄ-ի գնահատում՝ ըստ գործունեության իրականացման վայրի.

4) համապատասխանության գնահատման ընթացքում օտարերկրյա գնահատողներ (փորձագետներ) ներգրավելիս ՀԳՄ-ի հետ կնքել լրացուցիչ համաձայնագիր:

2.2.2. ՀԱՄ-ը պարտավոր է՝

1) ՀԳՄ-ի հավատարմագրման վկայագրի վավերականության ամբողջ ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել պարբերական գնահատում՝ հետևյալ ժամկետներում.

<u>հավատարմագրումից, յուրաքանչյուր պարբերական գնահատումից՝ մեկ տարվա ընթացքում</u>

(ժամկետը)

2) սահմանել ուղղիչ գործողությունների իրականացման ստույգ ժամկետներ՝ պարբերական գնահատման, այդ թվում՝ արտահերթ գնահատման ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունների դեպքում.

3) ապահովել իր կողմից հավատարմագրված ՀԳՄ-ների հավատարմագրման ընթացիկ կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը և պարբերաբար արդիականացնել այդ տեղեկատվությունը.

4) հրապարակել հավատարմագրման կանոններն ու ընթացակարգերը, հավատարմագրված ՀԳՄ-ների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը.

5) տրամադրել տեղեկատվություն հավատարմագրման բնագավառում միջազգային համագործակցության մասին.

6) ժամանակին տեղեկացնել ՀԳՄ-ներին հավատարմագրման չափանիշների փոփոխության վերաբերյալ.

7) ապահովել ՀԳՄ-ի հավատարմագրման գործընթացի իրականացումը ՀՀ կառավարության 2012թ. սեպտեմբերի 6-ի N 1201-Ն որոշման 1-ին կետով սահմանված ՀԳՄ-ների հավատարմագրման կարգին (այսուհետ՝ Կարգ) համապատասխան.

8) ապահովել հավատարմագրման գործընթացի արդյունքում ստացված տեղեկատվության գաղտնիությունը և չհրապարակել այդ տեղեկատվությունը առանց ՀԳՄ-ի գրավոր համաձայնության, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի.

9) վերաձևակերպել (վերաթողարկել) հավատարմագրման վկայագիրը.

10) ներառել հավատարմագրված ՀԳՄ-ներին ազգային ռեեստրում և կիրառելիության դեպքում՝ Եվրասիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների և փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) միասնական ռեեստրի (Միասնական ռեեստր) ազգային մասում:

2.3. Կողմերն իրականացնում են նաև «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով և Կարգով նախատեսված այլ իրավունքներ և դրանց համապատասխան կրում են այլ պարտականություններ:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է **2300000 (երկու միլիոն երեք հարյուր հազար)** ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է ՀԳՄ-ի հավատարմագրման ամբողջ ժամկետի տարեկան անդամավճարները և հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար իրականացվող վճարները:

3.2. 3.1. կետում նշված գումարները հաշվարկվում են ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015թ. մարտի 6-ի N 311-Ն հրամանով հաստատված հավատարմագրման աշխատանքների գների հաշվարկման կարգին համապատասխան՝ համաձայն հավելվածի:

3.3. Հավատարմագրման գործընթացի վճարումները ՀԳՄ-ն կատարում է համաձայն ներկայացված հաշվի՝ 5 բանկային օրվա ընթացքում:

3.4. Պայմանագրի գնից 1800000 (մեկ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամը կազմում է ՀԳՄ-ի երեք տարվա տարեկան անդամավճարը, որը ՀԳՄ-ն վճարում է յուրաքանչյուր տարի 600000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ՝ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015թ. մարտի 6-ի N 311-Ն հրամանով հաստատված հավատարմագրման աշխատանքների գների հաշվարկման կարգի 9-րդ կետի աղյուսակ 3-ի 1.1 կետ, իսկ 500000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը նախատեսվում է հավատարմագրման ամբողջ ժամկետում տարեկան պարբերական գնահատումների ժամանակ փորձագետներին (գնահատողներին) իրականացվող վճարների համար՝ համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2015թ. մարտի 6-ի N 311-Ն հրամանով հաստատված հավատարմագրման աշխատանքների գների հաշվարկման կարգի 6-րդ կետի աղյուսակ 2-ի:

3.5. Սույն պայմանագրով նախատեսված հավատարմագրման աշխատանքների համար գանձվող գումարը ենթակա է հետագա վերահաշվարկի:

3.6. Հավատարմագրման աշխատանքները համարվում են ավարտված ՀԱՄ-ի կողմից և հավատարմագրման ծառայությունների, գնահատումների համար ներկայացված կատարողական ակտի և հաշիվ-ապրանքագրի ստորագրման պահից:

3.7. Սույն պայմանագրի 2.1.2 կետի 9) և 10) ենթակետերով նախատեսված ժամկետները խախտելու դեպքում ՀԳՄ-ն ՀԱՄ-ին վճարում է տույժ՝ կետանց յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի 0,1%-ի չափով:

Տույժի վճարումը ՀԳՄ-ին չի ազատում իր պարտավորությունները կատարելու պատասխանատվությունից:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

4.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից

յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

5.1. Պայմանագիրը լուծվում է՝

1) ՀԱՄ-ի կողմից սահմանված ժամկետում փաստաթղթերի փորձաքննության կամ ՀԳՄ-ի ըստ գործունեության իրականացման վայրի գնահատման ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունները չվերացնելու դեպքում.

2) ՀԳՄ-ի կողմից պայմանագրային վճարումները պարբերաբար չկատարելու դեպքում.

3) հավատարմագրման դադարեցման որոշման ընդունման դեպքում.

4) ՀԳՄ-ի լուծարման դեպքում.

5) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:

6. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև ՀԳՄ-ի հավատարմագրման ժամկետի ավարտը, եթե կողմերից մեկը այն վաղաժամկետ չի լուծի:

6.2. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3. Պայմանագրի գործողության ընթացքում առաջացած վեճերը և (կամ) տարաձայնությունները լուծվում է բանակցությունների միջոցով կամ դատական կարգով:

6.4. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն ունեն իրավաբանական ուժ, եթե դրանք կատարված են գրավոր համաձայնագրով:

6.5. Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Համապատասխանության գնահատման մարմին	Հավատարմագրման ազգային մարմին
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ (կազմակերպության անվանումը)	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր (իրավաբանական անձի գտնվելու վայրը) ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր (գործունեության իրականացման վայրը)	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2
Հեռախոս (010)28-18-80 Ֆաքս (010)28-06-69	Հեռախոս (010)20-33-81, (011)20-33-81 Ֆաքս ----------
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930000199200100 ՀՎՀՀ 04401874	Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900018003963 ՀՎՀՀ 00116673
Գլխավոր տնօրեն՝ Մովսես Վարդանյան Կ.Տ.	Տնօրենի ժ/պ՝ Անի Օբոսյան Կ.Տ.

Հավելված N 1

«30» «08» 2019թ.

N 7 - ՀՊ/03/53 պայմանագրի

Հ/հ	Հավատարմագրման գործընթացի անվանումը	Գումարը
1	Տարեկան անդամավճար (2019-2020թթ)	600000
2	Տարեկան անդամավճար (2020-2021թթ.)	600000
2.1	Պարբերական գնահատումների համար փորձագետների վճար (2020թ.)	250000
3	Տարեկան անդամավճար (2021-2022թթ.)	600000
3.1	Պարբերական գնահատումների համար փորձագետների վճար (2021թ.)	250000
	Ընդհանուր	***2300000***

Համապատասխանության գնահատման մարմին	Հավատարմագրման ազգային մարմին
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԲԸ (կազմակերպության անվանումը)	«Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ
ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր (իրավաբանական անձի գտնվելու վայրը) ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Մեծամոր (գործունեության իրականացման վայրը)	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 49/2
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ h/h 1930000199200100 ՀՎՀՀ 04401874	Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն h/h 900018003963 ՀՎՀՀ 00116673
Գլխավոր տնօրեն՝ Մովսես Վարդանյան Կ.Տ.	Տնօրենի ժ/պ՝ Անի Օբոսյան Կ.Տ.